ARMENIAN FIGHTERS HELPED LIBERATE KESSAB

Posted on October 10, 2014 by Keghart



Category: Opinions

Adapted from **Hamo Moskofian**'s report in Armenian, Beirut. Oct. 8 2014

Armenian fighters were among the forces which took part in the liberation of Kessab, Syria in June. The volunteers came from Armenia and from various centres in the Diaspora. As in the Artskah War, they demonstrated their courage and effectiveness in combat.

Despite the obstacles, Arthur, the son of Artsakh hero-martyr Valery Vardanyan, managed to travel from Spain to Syria. He led a team of 20 veterans, among them “Qery”, “Mher”, “Avo”, “Kirakos” and others whose names are not made public for security reasons. Among the fighters was also "Ani", a modern "Mother Sosseh". She fully participated in the liberation of Kessab.

Adapted from **Hamo Moskofian**'s report in Armenian, Beirut. Oct. 8 2014

Armenian fighters were among the forces which took part in the liberation of Kessab, Syria in June. The volunteers came from Armenia and from various centres in the Diaspora. As in the Artskah War, they demonstrated their courage and effectiveness in combat.

Despite the obstacles, Arthur, the son of Artsakh hero-martyr Valery Vardanyan, managed to travel from Spain to Syria. He led a team of 20 veterans, among them “Qery”, “Mher”, “Avo”, “Kirakos” and others whose names are not made public for security reasons. Among the fighters was also "Ani", a modern "Mother Sosseh". She fully participated in the liberation of Kessab.

On special mission from the Syrian national army and allied commanders, the Armenian fighters landed 10 km from Kaladuran. Evading snipers, they then headed to the base of the strategically important Maqlaa Mountain, near Kessab, close to the Turkish border. In the cover of darkness the Armenian fighters climbed the mountain, each carrying 50 kg of military load, and attacked the enemy defile. The enemy fled in panic, leaving numerous dead behind.

After neutralizing the mines, the Armenian sappers undertook a mopping up operation of the terrorists' lairs. Riding motorcycles appropriated from the enemy, the victorious fighters then entered Kessab on June 13, without suffering any casualty.

Syrian and allied commanders were astonished by the courage of the Armenian fighters who had seen action in the Artsakh War and during the civil wars in Lebanon and Syria. The Arab commanders were also impressed by the Armenian fighters' readiness to protect fellow Armenians in the Diaspora.

“If those criminals, armed by the Turks, had invaded Latakia none of the Christians would have survived. Everyone would have been massacred,” said Commander Arthur Vardanyan.

Քեսաբի Հայ Ազատամարտիկների Ջոկատը

Հայկական Քեսաբի ազատագրութեան մասնակցեց նաեւ հայ ազատամարտիկների ջոկատը՝ գլխաւորութեամբ Արցախեան ազատամարտիկ հերոս-նահատակ Վալերի Վարդանեանի առիւծասիրտ որդին

Համօ Մոսկոֆեան, Պէյրութ, 8 Հոկտեմբեր 2014

Հայկական Կիլիկիայի վերջին բնակավայր, չքնաղ Քեսաբի ազատագրութեանը մասնակցեցին նաեւ հայ ազատամարտիկներ, որոնք իրենց խիզախութիւնը, հայրենասիրութիւնն ու զէնքը ի մի էին բերել և ցանկութեան դէպքում, Մայր Հայրենիքից թէ Սփիւռքից զինուորագրուած հայ երիտասարդներ՝ կարող են հրաշքներ գործել, ինչպէս արցախեան հերոսամարտի օրերին։

Արցախի հերոս, Շուշիի առիւծասիրտ հոգեւոր Առաջնորդ Պարգեւ Արք. Մարտիրոսեանը ասել էր. «Երբ միաբան էինք, տարանք անհաւատալի յաղթանակներ...»։

Հակառակ բոլոր խոչընդոտներին, հայերի կողմից դրուած արգելքներին, իբր թէ ժողովուրդը փրկելու աւելի մեծ արհաւիրքներից, թուրքի եաթաղանից՝ Արցախեան ազատամարտի նահատակ հերոս Վալերի Վարդանեանի որդին Արթուրը, Իսպանիայից ժամանեց Սիրիա, ղեկավարելով սկզբում 20 հոգուց բաղկացած փորձառու մարտիկների ջոկատը, որոնց շարքում էին բազմաթիւ մարտերում թրծուած «Քեռի»ն, «Վարպետ»ը, «Միեր»ը, «Աւօ»ն, «Լեւոն»ը, «Սագօ»ն, «Կիրակոս»ն ու ուրիշ հայազգի քաջազուններ, որոնց անունները անվտանգութեան մտահոգութիւններից ելնելով չենք ցանկանում հրատարակել այժմ։

Ստանալով յատուկ առաջադրանք, Քեսաբի ազատագրութեանը մասնակցող Սիրիայի ազգային բանակից և նրա դաշնակիցների հրամանատարութիւնից, հայ ռազմիկներին ծովի ճանապարհով ափ են իջեցնում Գալադուրանից 10 կլմ. առաջ, որ նրանք հետիոտն, արձակազէնների ու դիպուկահարների կրակից խուսափելով, հասնում են ռազմագիտական մեծ կարեւորութիւն ունեցող Մակլա սարի ստորոտին, որն գտնուում է Քեսաբի մօտիկ, թուրքական սահմանի վրա։ Ապա, մութնուլուսին, իւրաքանչիւրը 50 քկ. ռազմական բեռով, մագլցում են սարը, անսպասելի խոյանքով յարձակուելով ոճրագործ նախայարձակների թաքստոցների վրայ, որոնք խուճապահար փախչում են՝ ետին թողնելով բազմաթիւ դիակներ։

Հայ ազատամարտիկ սակրաւորները վնասազերծում են ականները, մաքրագործում են ահաբեկիչների «բնակարան»ները ու իրենց ձեռքը որպէս ավար ընկած մոտորցիկլետներով յաղթական մուտք գործում ազատագրուած Քեսաբ, 13 Յունիսի 2014 թ.ին, առանց ոչ մէկ զոհ տալու...։ Սիրիական և դաշնակից ուժերի հրամանատարութիւնը շշմել էր հայ ազատամարտիկների քաջագործութիւններից, լաւ հասկանալով թէ գործ ունի արցախեան մարտերում, թէ Սիրիայի ու Լիբանանի քաղաքացիական պատերազմների դաժան մարտերում թրծուած զինուորականների հետ՝ որոնք առիւծասիրտ հայ վրիժառուներ են, պատրաստ պաշտպանելու իրենց հայրենակիցներին՝ աշխարհի որ ծայրամասում որ գտնուեն։

_ “Եթե այդ հրոսակները, որոնք զինուած էին թուրքերի կողմից, յանկարծ զաւթէին Լատակիան, ապա և ոչ մի հայ քրիստոնեայ չէր փրկուելու իրենց զազրելի ոճիրներից։

Կոտորելու էին բոլորին...” համացանցային մեր հարցազրոյցում ասաց հրամանատար Արթուր Վարդանեանը։

Հայ կնոջ հերոսական կերպարը մարմնաւորեց նաեւ մեր օրերի «Սօսէ մայրիկ» ու «Այծեմնիկ» Անին, որ իր բոլոր կարելի միջոցները ի սպաս դրեց հայկական ջոկատի ազատագրական մահու կենաց պայքարին, որ թէեւ այժմ աւարտուեց յաղթանակով, սակայն չգիտենք թե ապագան ինչպիսի արհաւիրքներ է թաքցնում, որոնց դիմակայելու համար, պէտք է պատրաստ լինենք։